Այսու առթիւս և մեք կը գրուատեմք յիշեալ Ազգասէր անձը, և միանգամայն քաղցր պարտք կդգամք հրապարակաւ պարզել մեր խորին գոհունակութեանց և երախտագիտութեանց հաւասարիքը առ Նորին Ազգասէր Մեծապատուութիւն հանդերձ յարգանաք։

ՆՈՒԷՐ

Նոր — Նախիջևանցի Մեծապատիւ Յովհաննէս Մարկոսեանփոփոլեանց երկու հարիւր ռուբլի նուիրեց ի նպաստ վերանորոգութեան Կաթողիկէ Տաճարի Մայր Էթոռոյս՝ առաքելով զայնս յանուն Ս. Կաթողիկոսի։

Յիշեալ բարեպաշտ անձի սոյնպիսի նուիրանաց համար մեր շնորհակալութիւնքը հրապարակաւ կը նուիրեմք Նորին Մեծապատուութեան։

ԸՐԿԵԱԶՈՒ Ս ԽԱՉ ՎԱՆՔ։

Երևանցի Մեծ. Պ. Պօղոս Խաչատրեան ոսկեզօծ մի Խաչ նուիրեց Երկեազու Ս. Խաչ Վանուց կաթուղիկէին վերայ կանգնեցնելոյ համար։

Յիշեալ ջերմեռանդ անձի նուէրը կդովեմք և շնորհակալութեամբ կհրապարակեմք ի գիտութիւն մերազնէից։

ՍՈՒՐՀԱՆԴԱԿ ԲԻՒԶԱՆԴԵԱՆ։

ԺԱՌԱՆԳՈՒԹԻՒՆ

Անգղիոյ հիւպատոսարանին կողմանէ հրատարակուած ծանուցում մի կը տեսնուի առանէ մ'ի վեր քաղաքիս հերոպական լրագրաց մէջ, որով Հօճա Ղազար Գրիգորեանի ժառանգորդք կը հրաւիրուին որ իրենց ժառանգորդ ըլլալն ապացուցանող վկայութիւն երով ներկայանան՝ իրենց իրաւունքը հաստատելու համար։

Յիշեալ ծանուցումէն կը հասկցուի թէ Հօճա Ղազար Գրիգորեան անուն Հայ մը մեռած և ժառանգութիւն թողած է, և թէ անոր ժառանգն եղող անձինք կան Մայրաքաղաքիս մէջ։

Առանկ ծանուցում մը միայն Ֆրանսերէն լրագրով հրատարակուելուն մէջ մասնաւոր դիտում մի ըլլալու է. որովհետև Հայու մը ժառանգներն հարկաւ Հայ կըլլան։

Ահաւասիկ ծանուցման թարգմանութիւնը։

ԺԱՌԱՆԳՈՒՆ Հօճա Ղազար Գրիգորեանի

ԱԶԳ ԱՌ ԴԻՏԱԽԱԶՍ.

Վերոյիշեալ ժառանգութեան նկատմամբ մասնակցութեան իրաւունք ունեցողաց կը ծանուցուի՝ որ մերձակայ Նոյեմբեր 10 էն սկսեալ՝ ամեն ուրբաթ ցերեկուան ժամը 1 ին (կէս օրէն մէկ ժամ առաջ) նիստ տեղի պիտի ունենայ Անգղիոյ Հիւպատոսարանը՝ ուր Սրբ Գիլիպ Գոանշիս նկատողութեան պիտի առնու յիշեալ ժառանգութեան մասնակից եղողաց վկայութիւնները և ապացոյցները։

Օրապիր Թիւ 585։

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՔ

Ներկայ Ամսագրովս աւարտեց Երրորդ տարեշրջանը, և յառաջիկայ 1872 տարւոյս Յունվարէն պիտի ըսկսանի Դ շրջանը՝ իրաքանչիւր ամիս հընդկան թերթով և պատկերազարդ հրատարակուելով։

Տարեկան բաժանորդագրութեան պիտի լինի միևնոյն ՀՈՐՍ ռուբլի հանդերձ ծախսուքն ճանապարհի։

Այս առթիւ մեր շնորհակալութիւնը փութամք մատուցանել համայն բաժանորդաց, որք սիրով ընդունելով և յօժարակամ ընթեռնելով Արարատ Ամսագիրները, թէ նոցա կարևոր պարունակութիւններէն բաւական տեղեկութիւնք քաղեն և օգտուին, և թէ նիւթապէս նպաստեն Տպարանի Մայր Աթոռոյս։

Շնորհակալութիւն մեծ մեր ամենայն Գործակալաց, որք սիրայօժար կամօք վարեցին Ամսագրոյս գործակալութեանց պաշտօնքը, և արդիւնաւէտ կերպիւ աշխատեցան և անշուշտ եմք զի աշխատին այսուհետև ևս ազգասիրաբար։

Շնորհակալութիւն նոյնպէս այն ամեն ազգայնոց՝ որոց իւրաքանչիւրն ըստ կարեաց փութացին իւրեանց զգացմանց և ըղձից թարգման լինելով թէ դաստիարակութեան վերաբերեալ՝ և թէ այլ ուսումնական և կարևոր առարկայից խորհրդածութեանց և դիտողութեանց պիտանի յօդուածներով գործակից լինել մեզ՝ և յորդոր կարդալ մերազնէից միջոցաւ Ամսագրոյս։

Վանից անդամ է ի Օմիւռնիա քաղաքէն Գործակալ Մեծապ. Պ. Ղուկաս Պալդազարեանց Խմբագիրն Երշալուսոյ Արարատեան՝ միջոցաւ իւր լրագրոյն կիմացնէ մեզ Արարատների ուշ կամ ոմանց ամսագրոց երբէք չստացուելոյն համար։

Երդարև զարմանք և ցաւ է մեզ, որ Խմբագրութիւնը — բացառութեամբ վերջին չորս ամսոց — ամեն ամիս Ռուսաստանի հետ նաև Կ. Պոլսոյ և Օմիւռնիոյ Արարատ ամսագիրները ի միասին կը յանձնէ արքունական սուրհանդակատան տեղւոյս, և կը յղէ, բայց չգիտեմք թէ ինչ է պատճառ՝ զի ինչպէս անցեալ տարի՝ նոյնպէս այս տարի Օմիւռնիոյ ամսագիրները կը յետանան յոյժ կամ կը կորչին։

Յանցելումն Գ. շրջանի Օգոստ. և Նոյեմբ. ամսագրոց համար Սինոդի կողմանէ գրուեցաւ Պոլսոյ Ռուսաց Սուրհանդակատան՝ խնդրելով նոյն ամսագրոց համար տեղեկութիւն, և պատասխանեցաւ իբր թէ խրկուած լինէին ի Օմիւռնիա, սակայն ցարդ մեր Մեծ. գործակալին տուած տեղեկութիւն հակառակը կը յայտնէ։

Ամենասիրելի Գ. շրջանի Յունիս և Էն. ամսագրոց համար ևս կը հաղորդէ Մեծ. Պալդազարեան միջոցաւ Երշալուսոյ, թէ ցարդ չէ ստացեալ։ Ուստի Մեծ. Պալդազարեանցին կիմացնեմք՝ որ սոցա համար գրագրութիւնք պիտի բացուին հարկաւոր եղած տեղեաց հետ։

ՎՐԻՊԱԿՔ

Ներկայ ամսագրոյս Գրդ թերթի (56րդ) 427 էն 14 երեսաց երեսահամարներ սխալ դրուած են ցերեան 440։

Նոյնպէս 57 րդ ընդհանուր թերթահամարը սխալմամբ 56 դրուած է ի ստորին լուսանցն։